



ԶԻՆՁ ՄՊԸ

## Ջրի սանիտարա-հիգիենիկ խնդիրների և ջրի արդյունավետ օգտագործման մասին

### Մաքուր ջուրն առողջության գրավականն է և առողջ ապրելակերպի հիմքը



«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի Բաժանորդների սպասարկման կենտրոնի թեժ գիծ՝ 1-71:

Բաժանորդը ջրաչափի ցուցմունքը կարող է ուղարկել հաղորդագրության տեսքով 81-71 կարճ համարին:

Վեբկայք: [www.armwater.am](http://www.armwater.am)

Էլ.փոստ: [info@armwater.am](mailto:info@armwater.am)

Ֆինանսավորող կազմակերպություն  
Պատվիրատու

Խորհրդատվական կազմակերպություն

Ասիական Ջարգացման Բանկ  
«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ  
«ՀԳՇՆ» ՄՊԸ - «ԶԻՆՁ» ՄՊԸ

Երևան 2015թ

## Ջրի կենսական կարևորությունը

Ջուրն օրգանիզմի հիմնական միջավայրն է, որտեղ ընթանում է բույսերի, կենդանիների և միկրոօրգանիզմների նյութափոխանակությունը: Կյանքն անհնար է առանց ջրի: Կենսականորեն անհրաժեշտ լինելու պատճառով ջուրը միշտ համարվել է կյանքի գոյության սկզբնաղբյուրը: Ջուր կա ամեն մի կենդանի էակի մեջ: Այն զբաղեցնում է երկրագնդի մակերեսի 2/3 մասը: Ջուրն անհոտ, անհամ, անգույն, թափանցիկ հեղուկ է:

Այն լավ լուծիչ է: Ջրում լուծվում են բազմաթիվ թթուներ, հիմքեր, աղեր և այլ նյութեր: Այն կարող է քայքայվել 1500°C-ից բարձր տաքացնելիս, ինչպես նաև ուլտրամանուշակագույն և ռադիոակտիվ ճառագայթման ազդեցությամբ:

Բնական ջուրը մաքուր չէ՝ պարունակում է լուծված աղեր, օրգանական և այլ նյութեր, մանրէներ և այլ կենդանի օրգանիզմներ: Կալցիումի և մագնեզիումի լուծված աղերը պայմանավորում են ջրի կոշտությունը, որը մասամբ վերանում է ջուրը եռացնելիս:



Ջուրն ամենաշատ օգտագործվող նյութն է: Այն ունի լայն կիրառում: Օգտագործվում է տնտեսության և արդյունաբերության բոլոր բնագավառներում: Ջուրն

օգտագործվում է խմելու (1 անձը խմելու նպատակով օգտագործում է միջին հաշվով 2-3լ օրական) ինչպես նաև սանիտարական և կենցաղային այլ կարիքների համար: Խմելու համար օգտագործվող ջուրը պետք է ունենա դուրեկան համ չպետք է պարունակի թունավոր նյութեր և մանրէներ:

Խմելու ջրի կոշտությունը (7մգ էկվ/լ) համային և հոտային հատկությունները պայմանավորող նյութերի պարունակությունը նորմավորվում է պետ ստանդարտով: Խստորեն վերահսկվում է մանրէների բացակայությունը, որը համաճարակային հիվանդությունների նախապայմանն է:

## Հիգիենա

Հիգիենայի տեսանկյունից մեծ նշանակություն ունի ջրի քիմիական կազմը, որի հետ կապված բնակչության շրջանում կարող են ի հայտ գալ ոչ ինֆեկցիոն բնույթի տարբեր հիվանդություններ:



Բնական պայմաններում ջուրը պարունակում է տարբեր քիմիական տարրեր ու միացություններ, որոնց կազմն ու հարաբերակցությունը կախված են աղբյուրների տեսակից (մակերեսային, ստորգետնյա), ջրի ձևավորման պայմաններից, և այլն:

## Ե՞րբ լվանալ ձեռքերը և ինչպե՞ս

Ձեռքերը չպետք է լվանալ սուկ դա արած լինելու համար: Եթե ձեռքերը վատ լվանաք, ձեռքերի վրա կմնան մեծ թվով մանրէներ: Ձեռքերը պետք է լվանալ օձառով և հոսող ջրի տակ: Միայն այդ ձևով է կարելի մաքրել ձեռքերը միկրոօրգանիզմներից:

## Ձեռքերը պետք է լվանալ

1. Հիվանդ մարդու հետ ֆիզիկական շփումից առաջ և հետո,
  2. Համակարգչային ստեղնաշարի վրա աշխատելուց առաջ և հետո,
  3. Մնունդ պատրաստելուց առաջ,
  4. Մնվելուց առաջ և հետո,
  5. Դեղորայք օգտագործելուց առաջ,
  6. Սանհանգույցից օգտվելուց հետո,
  7. Բոլոր այն դեպքերում, երբ ձեռքերը տեսանելիորեն աղտոտված են,
  8. Դրսից տուն մտնելուց հետո:
- Ձեռքերի կարճատև լվացումը սովորական օձառի փրփուրով 10-15 վրկ տևողությամբ՝ հաջորդիվ հոսող ջրի տակ ցայելով, հիմնականում համարվում է բավարար: Ոչ շատ տաք ջուրը օձառի ազդեցությունը ավելի արդյունավետ է դարձնում:

## Ինչպես լվանալ ձեռքերը

### Step 1

Squeeze a small amount of sanitiser gel/soap over left palm and dip all fingers of right hand into left palm, and vice versa



### Step 2

Palm to palm



### Step 3

Right palm over left dorsum and left palm over right dorsum



### Step 4

Palm to palm, fingers interlaced



### Step 5

Backs of fingers to opposing palms with fingers interlocked



### Step 6

Rotational rubbing of right thumb clasped in left palm and vice versa



### Step 7

Rotational rubbing of right wrist and vice versa. Rinse and dry thoroughly.



1. Լցնել հեղուկ օձառը ձախ ձեռքի ափի մեջ և աջ ձեռքի բուրբ մատներն ընկղմել ձախ ձեռքի ափի մեջ և հակառակը:
2. Ափերով կատարել պտտական շարժումներ:
3. Աջ ափով շփում ենք ձախ ձեռքի արտաքին մասը, և հակառակը, ձախ ափով՝ աջ ձեռքի արտաքին մասը:
4. Մատներն իրար հյուսել և ափերով կատարել շարժումներ առաջ և հետ:
5. Մի ձեռքի ափը մոտեցնում ենք մյուս ձեռքի մատներին կատարելով պտտական շարժումներ և հակառակը:
6. Մի ձեռքի ափով վերցնում ենք մյուս ձեռքի բուրբ մասը և պտտական շարժումներ ենք կատարում, նույնը մյուս ձեռքի համար:
7. Մի ձեռքի ափով վերցնում ենք մյուս ձեռքի դաստակը և կատարում պտտական շարժումներ, նույնը՝ մյուս ձեռքի համար:



## Ջրի միջոցով տարածվող հիվանդություններ

Ըստ Համաշխարհային Առողջապահական Կազմակերպության տվյալների ինֆեկցիոն բնույթի բոլոր հիվանդությունների առաջացման 80%-ը պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ:

Ջրի միջոցով կարող են տարածվել **խոլերա, որովայնային տիֆ, սալմոնելոզը, դիզենտերիան** և այլ հիվանդություններ:

**Խոլերան** ինֆեկցիոն հիվանդություն է, բնութագրվում է ջրային լուծի և փսիման ձևով, որոնք չեն ուղեկցվում որովայնի ցավերով, ջերմաստիճանի բարձրացմամբ և սրտխառնոցով: Հատկապես, անհրաժեշտ է խոլերան տարբերակել որովայնի սուր վիրաբուժական հիվանդություններից:

**Որովայնային տիֆը** և պարատիֆ A և B սուր ինֆեկցիոն հիվանդություններ են, որոնք նման են իրենց կլինիկական նշաններով և պաթոգենեզով: Առաջանում են սալմոնելա տեսակի բակտերիաներով, բնութագրվում են աղիների լիմֆատիկ ապարատի ախտահարումով (գլխավորապես բարակ աղիի), բակտերեմիայով և ընթանում են արտահայտված ինտոքսիկացիայով, լյարդի և փայծաղի մեծացումով, հաճախ արտահայտվում է ցանով:

**Սալմոնելոզը** սուր աղիքային հիվանդություն է հարուցիչը սալմոնելաներն են: Վարակի հիմնական կրողները ընտանի կենդանիներն ու թռչունները են: Վարակը նրանցից

մարդուն է փոխանցվում վարակված սննդամթերքի և ջրի միջոցով: Բնութագրվում է կրկնակի փսիումով, ջերմության բարձրացմամբ, փորլուծությամբ, որովայնացավերով:

**Դիզենտերիան** բնութագրվում է լուծով, որովայնում՝ հաստ աղու շրջանում ձգող տանջող, ցավերով: Նմանտիպ ինֆեկցիաները կարող են հանգեցնել ջրազրկման և ջերմության կտրուկ բարձրացմանը՝ ընդհուպ մինչև սպառնալիք հանդիսանալով մարդու կյանքի համար:

Խմեք մեծ քանակությամբ հեղուկ, ցանկալի է գոլ կամ սենյակային ջերմաստիճանի, փոքր կումերով: Խուսափեք ալկոհոլից, սուրճից, կաթից և մրգային հյութերից: Նման դեպքերում չպետք է զբաղվել ինքնաբուժմամբ և անհրաժեշտ է անհապաղ դիմել բժիշկի:

*Պետք է նշել, որ ջրային ինֆեկցիոն հիվանդությունների տարածումը հնարավոր է միաժամանակ երեք անհրաժեշտ պայմանների դեպքում.*

1. Ջրային ինֆեկցիոն հիվանդության հարուցիչը պետք է հայտնվի խմելու ջրում:

2. Հարուցիչները ջրային միջավայրում պետք է պահպանեն իրենց կենսունակությունը որոշակի ժամանակահատվածում:

3. Խմելու և կենցաղային նպատակներով ջրի օգտագործման ժամանակ ինֆեկցիոն հիվանդության հարուցիչը պետք է ներթափանցի մարդու օրգանիզմ:



Վարակը ջրի միջոցով փոխանցվում է ոչ միայն խմելով, այլ նաև լվացվելով, օգտագործելով այն սննդի մեջ, ինչպես նաև այդ ջրով լվանալով բանջարեղենը, սպասքը և այլն: Լվացեք սննդամթերքը հոսող ջրով:

**Հաճախակի տրվող հարցեր**

**1 ՈՐՈ՞ՆՔ ԵՆ «ՀԱՅՋՐՄՈՒԴԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ՍՊԱՍԱՐԿՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ**

«Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ն (ՀՋԿ) իրականացնում է ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ հանրապետության 37 քաղաքներում և 270 գյուղական համայնքերում, այն սպասարկում է ավելի քան 275.000 բաժանորդ, որոնցից միջին հաշվով ամսական մոտ 190.000-ն են օգտվում ծառայություններից:

**2.ԻՆՉՊԵ՞Ս ԴԱՌՆԱԼ ԲԱԺԱՆՈՐԴ**

Բաժանորդ դառնալու համար ֆիզիկական կամ իրավաբանական անձը պետք է դիմի ընկերության կողմից սպասարկվող տարածքի տեղամաս, ներկայացնելով համապատասխան փաստաթղթեր: Այնուհետև, դառնալով ընկերության բաժանորդ, անհրաժեշտ է դիմում գրել տվյալ տարածքը սպասարկող ընկերության տեղամաս՝ ջրաչափի տեղադրման համար: Բաժանորդագրվելուց հետո կրկին պետք է դիմել տեղամաս՝ ջրաչափը կապարակնալու և հաշվառում ստանալու համար:

**3. ԻՆՉՈ՞Ւ Է ՊԵՏՔ ՏԵՂԱԴՐԵԼ ՋՐԱՉԱՓ**

Ջրաչափի տեղադրման անհրաժեշտությունը պայմանավորված է ճիշտ հաշվառումով: Բաժանորդը կարող է հետևել իր կողմից սպառված ջրի քանակին: Ջրաչափեր չունեցող բաժանորդների հաշվարկները կատարվում են ՀՀ կառավարության 130-ն որոշման (22 հունվարի 2004 թ.) համաձայն՝

- Բազմաբնակարան շենքերի բնակիչ-բաժանորդների համար 200լ/օր/անձ (մեկ բաժանորդի հաշվով միջին ամսական 18խմ),
- Առանձնատների բնակիչ-բաժանորդների համար խողովակի թողունակությամբ, բայց ոչ ավել քան 100 խմ/ամիս (1ժամ ջրամատակարարման դեպքում ամսական մոտ 28խմ)
- Իրավաբանական անձանց համար խողովակի թողունակությամբ՝ առանց սահմանափակման:

**4. Ո՞ՒՄ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ Է ԳՆՎՈՒՄ ՋՐԱՉԱՓԸ**

Ջրաչափը գնվում և տեղադրվում է բաժանորդի հաշվին (ՀՀ կառավարության 130-Ն որոշում, 22 հունվարի 2004 թ):

**5. ՈՐՔԱ՞Ն ԵՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009թ. փետրվարի 27-ի թիվ 71-Ն որոշմամբ, սկսած 2009թ. ապրիլի 1-ից ընկերության սպասարկման տարածքում սահմանված են և գործում են հետևյալ սակագները (ԱԱՀ-ով)՝

- Սպառողներին խմելու ջրի մատակարարման ծառայության մատուցման սակագինը՝ մատակարարված յուրաքանչյուր խմ խմելու ջրի դիմաց՝ **154.47** դրամ,
- Սպառողներին ջրահեռացման ծառայության մատուցման սակագինը՝ մատակարարված յուրաքանչյուր խմ խմելու ջրի դիմաց՝ **25.31** դրամ,
- Խմելու ջրի մատակարարման մեծածախ ծառայության մատուցման սակագինը՝ յուրաքանչյուր խմ խմելու ջրի դիմաց՝ **51.49** դրամ է:

**6.ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանում խմելու ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները, ինչպես նաև արտադրվող և բնակավայրերին կենտրոնացված համակարգերով տրվող խմելու ջրի հսկողության կանոնները՝ սահմանվում են ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի՝



խմելու ջրի որակին ներկայացվող պահանջներով, իսկ որակի հսկողությունը՝ N 2-III-Ա2-1 սանիտարական կանոններով և նորմաներով: Խմելու ջրի հսկողությունը իրականացվում է համաձայն յուրաքանչյուր տարածաշրջանի համար

հաստատված տարեկան ժամանակացույցերի, որոնք

համաձայնեցվում են ՀՀ Առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության մարզային կենտրոնների հետ:

Հայաստանում աղբյուրների ջուրը մեծամասամբ բավարարում է խմելու ջրին ներկայացվող պահանջները:

Եթե սպառողը նկատում է մի շարք շեղումներ ինչպիսին են ջրի գույնի և թափանցիկության փոփոխություն, տհաճ հոտ կամ համ, նա իր անվտանգության նկատառումներից ելնելով պետք է դիմի համապատասխան ջրամատակարար կազմակերպությանը՝ «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ կամ մոտակա Առողջապահական պետական տեսչության մարզային կենտրոն:

**7.ԻՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄԸ**

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն անընդմեջ տեղեկացնում է իր բաժանորդներին, որ իր սպասարկման տարածքներում մատակարարում է միմիայն քլորացված ջուր, որը համապատասխանում է պահանջված բոլոր նորմերին: Միայն քլորացման ռեժիմի ապահովման պայմաններում խմելու ջուրը կարող է համապատասխանել նորմերին: Ընկերությունում խմելու ջրի վարակազերծումը իրականացվում է քլորակայաններում՝ հատիկավոր քլոր պարունակող ռեագենտների միջոցով: Հեղուկ քլորի ճշգրիտ դոզայավորումը իրականացվում է վերանորոգված 61 քլորակայաններում տեղադրված ժամանակակից քլորացնող սարքավորումների միջոցով:

## Բաժանորդների իրավունքներն ու պարտավորությունները

### *Բաժանորդն իրավունք ունի՝*

1. Ստանալ սանիտարական նորմերին համապատասխանող, շուրջօրյա կամ հաստատված ջրամատակարարման ժամանակացույցի ջուր:
2. Միակողմանի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին ջրամատակարարին տեղեկացնելով առնվազն 10 օր առաջ՝ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց ամբողջությամբ վճարելու պայմանով:
3. «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծել բանակցությունների միջոցով, իսկ փոխհամաձայնության չգալու դեպքում վեճերը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Պայմանագրով ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում բաժանորդն ազատվում է պատասխանատվությունից, եթե դա կապված է ֆորս-մաժորային դեպքերի հետ, որոնք ծագել են պայմանագիրը կնքելուց հետո և որոնք կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այսպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

### *Բաժանորդը պարտավոր է՝*

1. Ապահովել իր սեփականությունը հանդիսացող ներքին ցանցերի, կառուցվածքների և ջրաչափերի կապարակնիքների անխախտելիության պահպանությունը:
2. Կատարել ջրամատակարարի նկատմամբ կանոններով և պայմանագրով սահմանված պարտավորությունները:
3. Վճարումները կատարել սահմանված ժամկետներում:
4. Ջուրն օգտագործել խնայողաբար: Միջոցներ ձեռնարկել ջրի կորուստները կանխելու և վերացնելու համար:
5. Ներքին ցանցերի, կառուցվածքների և սարքերի տեխնիկական շահագործումն իրականացնել պատշաճ հոգատարությամբ ու զգուշությամբ:
6. Չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում, տեղադրված ջրաչափի ցուցմունքների գրառման և ներքին ցանցերի, կառուցվածքների ու սարքերի տեխնիկական շահագործման վիճակը համատեղ ուսումնասիրելու համար, ինչպես նաև ջրամատակարարի մոտ բաժանորդի օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկած առաջանալու դեպքում՝ այն ճշգրտելու համար:
7. Խմելու ջրի չմատակարարման և կեղտաջրերի չհեռացման կամ դրանց ոչ պատշաճ մակարդակով կատարման, ջրաչափի անսարքության, կապարակնիքների խախտման, ինչպես նաև ջրի որակի նկատմամբ կասկածներ

առաջանալու դեպքում անհապաղ տեղեկացնել ջրամատակարարին:

8. Ջրաչափի տեղադրումից հետո գրավոր տեղեկացնել ջրամատակարարին՝ սահմանված կարգով ջրաչափն ընդունելու և կապարակնքելու համար:

### *Ջրամատակարարը պարտավոր է՝*

1. Ջրամատակարարի մոտ կասկած առաջանալու դեպքում, ջրամատակարարի կամ բաժանորդի նախաձեռնությամբ, սահմանված կարգով անցկացվում է ջրաչափի ստուգաչափում՝ բաժանորդի դիմումը ստանալու կամ ջրամատակարարի կողմից բաժանորդին ստուգաչափման մասին պաշտոնապես ծանուցանելու օրվանից 10-օրյա ժամկետում:
2. Ջրամատակարարումը կամ ջրահեռացումը սահմանափակելու կամ դադարեցնելու մասին ոչ ուշ, քան մեկ օր առաջ նախագրուշացնել բաժանորդին, իսկ վթարների կամ արտակարգ իրավիճակների դեպքում զանգվածային լրատվության միջոցներով հնարավորինս սեղմ ժամկետում բաժանորդին (բաժանորդներին) տեղեկացնել դրա մասին:
3. Բնակավայրում կամ դրա առանձին շրջաններում ջրամատակարարման դադարեցման դեպքում, անկախ պատճառից, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող ընդհանուր միջոցառումների շրջանակներում լուծել բաժանորդների

ժամանակավոր ջրամատակարարման կազմակերպման հարցերը:

4. Ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում բաժանորդներին ապահովել պայմանագրերով նախատեսված ջրաքանակով, անհրաժեշտ ճնշման և խմելու որակի ջրով:
5. Կատարել բաժանորդի կեղտաջրերի հեռացումն ու մաքրումը՝ պայմանագրով նախատեսված քանակին ու որակին (բաղադրությանը) համապատասխան:
6. Իրականացնել հսկողություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի, կառուցվածքների և սարքերի տեխնիկական վիճակի ու շահագործման նկատմամբ:
7. Հայտնաբերել և կանխել ջրի հոսակորուստները, հաշվառել ու հսկել իր կողմից մատակարարվող և բաժանորդի կողմից օգտագործվող (սպառվող) ջրաքանակները:
8. Ջրամատակարարման և ջրահեռացման սակագների փոփոխման դեպքում առնվազն մեկ ամիս առաջ ապահովել զանգվածային լրատվության միջոցներով բաժանորդներին դրա մասին տեղեկացումը:
9. Բաժանորդի պահանջի դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել խմելու ջրի որակը հավաստող փաստաթուղթ:
10. Բաժանորդի կողմից ջրամատակարարման և





ջրահեռացման համակարգերին կատարված ապօրինի միացումների հայտնաբերման դեպքում կազմել կանոնների խախտման մասին ակտ և տեխնիկական հնարավորության դեպքում անհապաղ դադարեցնել խմելու ջրի մատակարարումն ու ջրահեռացումը՝ մինչև պարտքի և խախտման մասին ակտով հաշվարկված գումարի լրիվ մարումը:

11. Իր մեղքով բաժանորդի ջրաչափի, ներքին ցանցի սարքերի և կառուցվածքների վնասման դեպքում իր միջոցների հաշվին կատարել դրանց փոխարինման, տեղադրման ու նորոգման աշխատանքները և փոխհատուցել պատճառված վնասները:
12. Առնվազն մեկ ամիս առաջ բաժանորդին գրավոր ծանուցել ջրաչափի ստուգաչափման ժամկետը լրանալու մասին:
13. Բաժանորդի կողմից ջրաչափի տեղադրման մասին տեղեկություն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում ներկայանալ՝ կանոններով սահմանված կարգով այն ընդունելու և կապարակնքելու համար:
14. Ոչ շուրջօրյա ջրամատակարարման դեպքում խմելու ջրի մատակարարման ժամանակացույցի մասին բաժանորդներին տեղեկացնել զանգվածային լրատվության միջոցներով:

### **Խմելու ջրի արդյունավետ օգտագործում**

Աղտոտիչ նյութերը բնական ջրերի մեջ են թափանցում պինդ, հեղուկ, կոլոիդային, էմուլսային և գազային ձևերով:

Ջրի աղտոտման հիմնական աղբյուրներն են արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերը, ձնհալի և անձրևների ժամանակ գյուղատնտեսական դաշտերից տեղափոխվող



պարարտանյութերը, թունաքիմիկատները, անձրևի և ձյան միջոցով մթնոլորտից անջատվող զանազան նյութեր: Արդյունաբերական հոսքաջրերն առավել հաճախ աղտոտված են նավթամթերքներով (բենզինի և քսայուղերի արտահոսքի արդյունքում), ֆենոլներով, ծանր մետաղներով և սինթետիկ լվացամիջոցներով (լվացքի համար նախատեսված փոշիներ, օձառներ և նյութեր, սպասք լվանալու հեղուկներ և այլն), ներկերով, ճարպերով, որոնք վատացնում են ջրի որակը, այն դարձնում խմելու և սննդի մեջ օգտագործելու համար ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, փոխվում է ջրային կենսաբազմազանությունը, նվազում են ձկների վերարտադրումն ու սննդային արժեքը: Դա կարող է բերել ձկների թունավորմանը և ոչնչացմանը: Հատկապես վտանգավոր են տաք հոսքաջրերը, որոնք փոխում են ջրավազանի ջերմային ռեժիմը. արդյունքում վատանում են ձկների ձվադրության պայմանները, ոչնչանում են մի շարք օգտակար մանրէներ, զարգանում են մակաբույծներ: Կենցաղային կոյուղաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Ջրավազանների աղտոտման առավել արտահայտված դրսևորումներից է ջրի «ծաղկումը» (էվտրոֆացում)՝ քաղցրահամ ջրավազանների վերին կենսահորիզոնում կանաչ և կապտականաչ ջրիմուռների զանգվածային բազմացումը: Ջրի «ծաղկման» յուրահատուկ օրինակ է Սևանա լճի «ծաղկումը»՝ ջրի մակարդակի իջնելուց հետո: Բնական ջրերի կարևոր առանձնահատկությունն ինքնամաքման կարողությունն է՝ գոլորշիանալու, հողի մեջ ներծծվելու և մանրէների գործունեության միջոցով:

Մշակվել են բնական ջրերի արհեստական մաքրման բազմաթիվ եղանակներ: Մեխանիկական եղանակով, օրինակ, մաքրվում են ջրի մեջ լողացող և կախված նյութերը:

Ջրերի մաքրման քիմիական եղանակներից կիրառվում են մակարդումը՝ քիմիական որոշ նյութերի ազդեցությամբ ջրում եղած խառնուրդները մակարդվում են և նստում են հատակին, կլանումը՝ քիմիական որոշակի կլանիչներով ջրից կլանվում և հեռացվում են վնասակար նյութերը, քլորացումն ու օզոնացումը՝ քլորի և օզոնի միջոցով ախտահանվում է խմելու ջուրը:

Կենսաբանական մաքրման դեպքում հոսող ջրերն անց են կացվում խիտ բուսածածկի, փայտի թեփի, արհեստական ակտիվ տիղմի և այլնի միջով: Մեծ կիրառություն ունի ջրերի մաքրումն արհեստական ակտիվ տիղմով: Երբ տիղմի մեջ բազմացող մանրէներն արագ խժռում են ջրում եղած վնասակար մանրէներին:

Ջուրը տհաճ հոտով գազերից ու նյութերից մաքրելու նպատակով կիրառվում է օդավորման (աերացիա)

եղանակը՝ հատուկ հարմարանքներով ջուրը հարստացվում է թթվածնով:

### Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալները

*Անբավարար ջրի քանակի ազդեցությունը մարդական առողջության և կենցաղի վրա*

- Աշխարհում ամեն 3-րդ բնակիչն ունի ջրի պակաս:
- 748 մլն մարդ աշխարհում զրկված է մաքուր ջուր օգտագործելու հնարավորությունից և նրանցից հիմնական մասը սոցիալապես անապահով խավի ներկայացուցիչներ են: Նրանցից 90%-ն ապրում է գյուղերում և 1/4 մասն օգտագործում է ջուր չմշակված ջրի աղբյուրներից (գետեր, լճեր և այլն):
- 1.8 մլրդ մարդ աշխարհում օգտագործում է ջուր, որը աղտոտ ված է կեղտաջրերով:
- 2.5 մլրդ մարդ հնարավորություն չունի օգտվել մաքուր սանիտարա-հիգիենիկ նորմերին համապատասխանող ջրից:
- Ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմ-



նականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարա-հիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ:

### ԱՀԿ-ի տվյալները սանիտարա-հիգիենիկ նորմերի վերաբերյալ



- Սանիտարա-հիգիենիկ նորմերը չպահպանելու և աղտոտված ջուր օգտագործելու հետևանքով Աֆրիկայում յուրաքանչյուր մեկ ժամվա ընթացքում մահանում է

115 մարդ:


- Ամեն տարի աշխարհում 1.5 մլն մարդ մահանում է փորլուծությունից: Սանիտարական իրավիճակը բարելավելու դեպքում կարելի է 1/3-ով նվազեցնել մահացության ցուցանիշը:
- Ձեռքերը հաճախակի լվանալը 45%-ով կրճատում է փորլուծությանը հիվանդանալու վտանգը:
- Մինչև 2015 թիվը աշխարհի բնակչության 75%-ը պետք է



ապահովված լինի սանիտարական նորմերին համապատասխանող ջրով, որը կբերի աղիքային հիվանդություններով հիվանդների քանակի նվազմանը 391 մլն-ով:

- Ամեն օր անվտանգ խմելու ջուր մատակարարելու դեպքում կարելի է կանխել 1.4 մլն երեխաների մահացության դեպք աղիքային հիվանդություններից:

### Գենդեր



«Գենդերը», անգլերեն բառ է, որը ծագել է լատիներեն gens-ցեղ բառից: 20-րդ դարի 2-րդ կեսից այդ հասկացությունը մտավ սոցիոլոգիա գիտության մեջ: Ի տարբերություն sex (սեռ) բառից, որը նկարագրում է մարդու բիոլոգիական սեռը գենդերը բնութագրում է մարդու սոցիալական սեռը կամ իրենից ներկայացնում է կնոջ և տղամարդու սահմանումը նրանց սոցիալական դերի հիման վրա: Գենդերը տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք, կանանց և տղամարդկանց միջև հարաբերությունների սոցիալական հայեցակետ, որն արտահայտվում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Սեռը տղամարդուն կնոջից տարբերելու բիոլոգիական հատկությունների գումար է: Մարդ ծնվում է կամ տղամարդ, կամ կին, որից հետևում է, որ նա կարող է ծննդաբերել, բարձրացնել ծանր իրեր, կրծքով կերակրել երեխային, երգել ավելի բարձր ռեգիստրում և այլն: Գենդերը

տղամարդու և կնոջ սոցիալական սեռն է, սոցիալական գումարային դերը, գործունեության նույնությունը և ոլորտը պայմանավորված ոչ կենսաբանական սեռական տարբերություններով, այլ

հասարակության սոցիալական կազմակերպվածությունից: Գենդերը կարծրատիպերի կոմպլեքս է, որոնք բերում են տիպիկ կանացի կամ տղամարդու վարքի մոդելի կազմավորմանը, դրա հետ մեկտեղ տղամարդիկ և կանայք ձեռք են բերում բնութագրեր, որոնք չունեն ոչ մի կապ սեռի հետ և կարող են փոփոխվել՝

- տարբեր աշխատավարձ
- չվճարվող աշխատավարձ (կանայք տանը ամեն օր կատարելով կենցաղային պարտականություններ աշխատում են 3-5 ժամ)
- միակողմանի դաստիարակում (երեխաներով հաճախ զբաղվում են կանայք)
- կանացի բարձր հուզականություն և տղամարդկանց անհոգություն և ազրեսիվություն
- հանցագործության արական դեմքը (հանցագործների մեծ մասը տղամարդիկ են)
- ֆինանսական կախվածություն (հիմնականում կանանց), կենցաղային անօգնականություն (հիմնականում տղամարդկանց)

Գենդերը կազմավորվում է սոցիալ-մշակութային միջավայրում և իրենից ներկայացնում է որակների միասնություն, սոցիալական վարք, դերեր և ստատուսներ, որոնք տարբերվում են կոնկրետ հասարակություններում

տղամարդկանց և կանանց մոտ: Գենդերի տակ ենթադրվում են տեսակետներ դեպի առնականություն և կանացիություն:

Համապատասխան վարքը ստեղծում է գենդերային նույնություն և որոշում է գենդերային դերը: Գենդերային դերի վրա ազդում են՝ տարիքը, էթնիկական պատկանելիությունը, սոցիալական դասի պատկանելիությունը, տնտեսական պայմանները, կրոնը և այլն: Գենդերային դերերը տղամարդկանց և կանանց համար տարբեր մշակույթներում տարբեր են, ինչպես նաև տարբեր են նույն մշակույթի տարբեր սոցիալական խմբերում: Փոխվում է մշակույթը (այն դինամիկ է), փոխվում են սոցիալ-տնտեսական պայմանները, որպես հատկանիշ փոխվում է նաև գենդերը:



Գենդերային հավասարությունը կարևոր հարց է կապված մարդու իրավունքների հետ: Գենդերային հավասարություն նշանակում է հավասար հնարավորությունների տրամադում տղամարդկանց և կանանց, որպեսզի նրանք համամասնորեն մասնակցեն հասարակական և անձնական կյանքի բոլոր ոլորտներում: Դա չի նշանակում, որ երկու սեռերը նույնն են, այլ, որ նրանք հավասար են իրավունքներով և հնարավորությամբ: Ինչպես մարդու իրավունքների դեպքում, այնպես էլ գենդերային հավասարության դեպքում պետք է մշտապես պայքարել, պաշտպանել և խրախուսել այն: